նամի ի Դ կողմս մեր. եւ եւս զի ոչ է պարտ այս գործ ի հաւատս մեր և յօրէնս՝ թէ իրերաց սուր դնի-ցեմք եւ կամ վատ կամիմք. եթէ ոչ որ մի կողմն թշնամի իցէ եւ դու չես թշնամի մեզ, զի մեծ թեւ թագաւորին կաս եւ պարծանք Թուրքաստան ազանց. ահա՛ այս երդմունս եւ այս ուխտ։ Եւ դնեն ի մէջ վկայ զգիրք Մահմետին որ ասեն Ղուրան, թէ Ընդ ձեզ ելանեմք և երթամք առաջի թագաւորի և զբարի անուն եւ զբարեկամութեան քո գործ առ նա քարո-զեմք, եւ դաւաճանութիւն քո որ առ վէզիր է՝ ա-բասցես, եւ ընդ քո իսկ վկայեմք մեք, արասցեն դատաստան, եւ այնուհետեւ ողջ կացցէ արքայ եւ դու, խաղաղութեամբ տեսցեն զաւուրս իւրեանց ազգս մեր ի կենդանութիւն թագաւորին եւ քո։ Եւ ահայ Մուրթազա եղբայր քո գիտէ զվնաս անձին իւրում որ առ քեզ ամօթալից, եւ վեհանձնութիւն քո գիտակ է որ առ քաղաքս կայ. եւ այժմ մեզա՛յ ասելով ան-կանի առաջի քո խնդրելով զներումն լրբութեան իւ-րոյ, որ առ վէմդ հարաւ եւ փչրեցոյց զզօրսն այն-քան. եւ մեք երաշխաւոր գոլով եւ նմին՝ եւ եկաք առ մեծութիւն քո։ Եւ Հասանին պատասխանեալ ա-մենեցուն մի մի, եւ յետինն հաւանի ի միտս իւր, քանզի խորհէր՝ եթէ ժողովեցի զօրս եւ ոչ կասեցին, ելեալ գնացի ի դրունս գահոյիցն եւ ոչ երկեան, եւ ելեալ եկաց աստ և ոչ հոգացին՝ և ահա՛ կամ. մինչև ցե՞րբ և սրով զի՞ առնիցեմ. նոքա ոչ գան ի վերայ իմ և թէ ես երթայց՝ ապստամբ երևիմ, զի ոչ արար այսու զիսօսս մեր թագաւորն բառնալով զվէզիրն. և վէզիրն ոչ երկեաւ և կամ ոչ ծանոյց զբան մեր առ թագաւորն՝ զզօրութեան կամ զպատրաստութեան զօ-րաց մերոց, և թէ ես քաջ եմ թէ ժառանգորդ[1]) լի-

1) ժռզդ.